ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՑ 15-Ը ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԱԼՄԱԹԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

   Էդուարդ Հակոբյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ղազախստանի Հանրապետություն, ք" Ալմաթի, 2025թ. փետրվարի 11-ից 15-ը

3. **Հրավիրող կողմը՝**

   Հրավերը ստացվել է Արժույթի միջազգային հիմնադրամի (International Monetary Fund - IMF) կողմից: Միջոցառումը Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (The Caucasus, Central Asia, and Mongolia Regional Capacity Development Center - CCAMTAC) աշխատանքային ծրագրի մասն է կազմում:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Գործուղման նպատակն է տարբեր երկրների հարկային մարմինների հետ համագործակցության զարգացումը և փորձի փոխանակման հնարավորությունների ընդլայնումը, ինչպես նաև համընդհանուր մարտահրավերներին դիմակայումն ու տարածաշրջանում առկա հարկային խնդիրների կարգավորմանն ուղղված արդյունավետ լուծումների վերհանումը:

   Բացի այդ միջոցառումը նպատակ ունի CCAM-ի երկրների հարկային մարմինների ներկայացուցիչների մոտ ձևավորել միասնական մոտեցում հարկային վարչարարարության բարելավման շուրջ և նպաստել հավելյալ հարկային եկամուտների հավաքագրմանը:

5. **Քննարկված թեմաները՝**

   Համաժողովի ընթացքում քննարկվել են հարկային ոլորտում համաշխարհային միտումները և այդ համատեքստում տարածաշրջանային ներկայիս իրավիճակը, անդրադարձ է կատարվել

տարածաշրջանային մարտահրավերներին, ինչպես նաև հարկային մարմինների միջև համագործակցության հնարավորություններին: Հաշվի առնելով ժամանակակից միտումները՝ քննարկվել է նաև հարկային վարչարարությունում արհեստական բանականության կիրառմանը, և վերջինիս առաջացրած ռիսկերին և հնարավորություններին առնչվող հարցեր:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Համաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել հարկային և մաքսային ոլորտների համաշխարհային միտումներին, տարածաշրջանային զարգացումներին և մարտահրավերներին, արհեստական բանականության կիրառման հնարավորություններին, ինչպես նաև համագործակցության ընդլայնման հեռանկարներին:

ՀՀ ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը հանդես է եկել ելույթով և մանրամասն անդրադարձել է վերոնշյալ հարցադրումներին, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ և Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համագործակցության արդյունքներին:

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը շնորհանդեսով անդրադարձել է Արժույթի միջազգային հիմնադրամի հետ արդյունավետ համագործակցությանը, ընդգծել հարկային վարչարարության ոլորտում ԱՄՀ կողմից իրականացված ծրագրերի արձանագրած դրական արդյունքները և կարևորել նման ծրագրերի շարունակականության ապահովումը:

Այցի շրջանակներում ՀՀ ՊԵԿ պատվիրակությունը երկկողմ հանդիպում է ունեցել ԱՄՀ-ի Ֆիսկալ հարցերի դեպարտամենտի փոխտնօրեն Քեթրին Բայերի և ԱՄՀ-ի CCAMTAC-ի տնօրեն Նորբերտ Ֆունկեի գլխավորած պատվիրակության հետ: Հանդիպմանը քննարկվել են ընթացիկ տեխնիկական աջակցության ծրագրերը և ապագա համագործակցության հնարավորությունները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Այցի ընթացքում տեղի ունեցած երկկողմ հանդիպումների արդյունքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ՝ ՊԵԿ կողմից ներկայացված հարկային և մաքսային

վարչարարության բարելավման նպատակով հնարավոր տեխնիկական աջակցության ծրագրերի իրականացման շուրջ: Մասնավորապես, քննարկվել է մաքսային վարչարարության ոլորտում նոր տեխնիկական աջակցության ծրագրի իրականացման հարցը, որի արդյունքում նախատեսվում է արդիականացնել մաքսային համակարգի ռիսկերի գնահատման գործընթացը: Քննարկվել է նաև հարկային վարչարարության ոլորտում միջազգային հարկման ուղղությամբ տեխնիկական հնարավոր աջակցության տրամադրման հարցը, որը միտված կլինի ՀՀ ՊԵԿ-ում ստեղծվող միջազգային հարկման վարչության կարողությունների զարգացմանը՝ տրանսֆերային գնագոյացման ընթացակարգերի, ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման և այլ ոլորտային կարողությունների զարգացման ճանապարհով: Միաժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱՄՀ աջակցությամբ իրականացնել տեխնիկական աջակցության ծրագիր հարկային ճեղքի գնահատման նպատակով, ինչպես նաև զարգացնել կարողությունները կատարողականի հիմնական ցուցանիշների գնահատման (Key Performance Indicators - KPI) ուղղությամբ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

ՀՀ ՊԵԿ կողմից մշտապես բարձր է գնահատվել և գնահատվում միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ ոլորտային քննարկումների անցկացումը, մասնավորապես հարկային և մաքսային վարչարարության ոլորտում արդիական և նորարական մեխանիզմների ներդրման համատեքստում:

Միջոցառումը հնարավորություն տվեց ՀՀ ՊԵԿ պատվիրակությանը մասնակցել մի շարք կարևոր քննարկումների տարածաշրջանային երկրներում հարկային և մաքսային վարչարարության բարելավման ոլորտում արդիական հարցերի վերաբերյալ, ներկայացնել ՀՀ ՊԵԿ համապատասխան փորձառությունը և իրականացված բարեփոխումները, ինչպես նաև նույնականացնել միջազգային լավագույն փորձը՝ ՀՀ-ում այն ներդնելու նպատակով: Կարևորում ենք նաև համաժողովի արդյունքում համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և

փորձագետների հետ միջազգային կապերի հաստատումը և ՀՀ ՊԵԿ կողմից առաջարկված հնարավոր տեխնիկական աջակցության ծրագրերի իրականացումը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Էդուարդ Հակոբյան

18.02.2025թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 19-ի
N1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **116-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Էդուարդ Հակոբյան ՀՀ ՊԵԿ նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Ղազախստանի Հանրապետություն՝ քաղաք Ալմաթի**
5. Գործուղման ժամկետները՝ **11.02.2025-15.02.2025թթ.**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **Հրավիրող կողմի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ **ճանապարհածախս,գիշերավարձ, օրապահիկ**
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն,ազգանուն*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0	**0**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	0	**0**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	0	**0**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Պաշտոնական պատվիրակությունների սրահից օգտվելու ծախս		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		0	**0**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ 17.02.2025թ.